Պալինդրոմներ երկուական համակարգում 1

Դիտարկենք այն թվերը, որոնք երկուական համակարգում պալինդրոմ են, այսինքն ձախից աջ և աջից ձախ նույն կերպ են գրվում։ Օրինակ՝ 1 (1), 3 (11), 9 (1001):

Պահանջվում է գրել ծրագիր, որը տրված n թվի համար արտածի երկուական համակարգում n-րդ պալինդրոմի 10-ական ներկայացումը։ Համարակալումը սկսել մեկից համարելով, որ առաջին պալինդրոմը 1-ն է։

Մուտքային տվյալներ

Տրված է մեկ բնական n (1<= n <= 100) թիվ։

Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ n-րդ պալինդրոմը։

Օրինակներ

Մուտք.
1
Ելք.
1
Մուտք.
9
Ելք.
27